«Գրանցված է»
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից
«24» մայիսի 2013 թ.
Պետական գրանցման համարը 1041365
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
արդարադատության նախարար

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» մայիսի 2013թ. N 56-Ն

ք. Ստեփանակերտ

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱԶԵՑՎՈՂ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ, ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ, ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ, ՀԱՏԻԱԿԱԽԱՐԻ (ՖՈՒՐԱԺԻ) ԵՎ ԱՅԼ ԿԵՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2003 թվականի օգոստոսի 26-ի N 245 որոշումը՝

Հ ր ա մ ա յ ու մ ե մ՝

1. Հաստատել հարկման նպատակով համախառն եկամտից նվազեցվող հացահատիկի, հացամթերքների, խոտաբույսերի սերմերի, հատիկախարի (ֆուրաժի) և այլ կերատեսակների փաստացի կորստի (բնական կորստի) չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝

1) սույն հրամանի 1-ին կետով սահմանված չափերը եռօրյա ժամկետում ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայություն՝ համաձայնեցման.

2) սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ղեկավար Ս. Բաղդասարյանին:

Ա. Խաչատրյան

Համաձայնեցված է
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
կառավարությանն առընթեր հարկային պետական
ծառայության պետ
_____ Ա. ԲԱԼԱՅԱՆ
16 մայիսի 2013թ.

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2013 թվականի մայիսի 13-ի
N 56-Ն հրամանի

Չ Ա Փ Ե Ր

ՀԱՐԿՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱԽԱՌՆ ԵԿԱՄՏԻՑ ՆՎԱՋԵՑՎՈՂ ՀԱՑԱՀԱՏԻԿԻ, ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ, ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ, ՀԱՏԻԱԿԱԽԱՐԻ (ՖՈՒՐԱԺԻ) ԵՎ ԱՅԼ ԿԵՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն նորմատիվ իրավական ակտը սահմանում է հացահատիկի, հացամթերքների, խոտաբույսերի սերմերի, հատիկախարի (ֆուրաժի) և այլ կերատեսակների տեղափոխման և պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստների թույլատրելի սահմանային չափերը:

2. Հացահատիկի, հացամթերքների, խոտաբույսերի սերմերի, հատիկախարի (ֆուրաժի) և այլ կերատեսակների տեղափոխման և պահպանման ընթացքում առաջացող բնական կորուստները հետևանք են դրանցում ընթացող ֆիզիկաքիմիական պրոցեսների և օդերևութաբանական գործոնների ազդեցության, տրանսպորտային միջոցների օգտագործման, ինչպես նաև պահպանման ժամանակ դրանց որակական ու քանակական պարամետրերի փոփոխություններից (պակասորդից) առաջացած կորուստների:

3. Բնական կորուստներին չեն դասվում հացահատիկի, հացամթերքների, խոտաբույսերի սերմերի, հատիկախարի (ֆուրաժի) և այլ կերատեսակների տեղափոխման և պահպանման ընթացքում ստանդարտների, տեխնիկական պայմանների, տեխնիկական շահագործման և պահպանման կանոնների, ինչպես նաև տեխնոլոգիական պահանջների խախտման հետևանքով առաջացած կորուստները:

II. ՀԱՑԱՀԱՏԻԿԻ, ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ, ՀԱՏԻԱԿԱԽԱՐԻ (ՖՈՒՐԱԺԻ) ԵՎ ԱՅԼ ԿԵՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

4. Երկաթուղային տրանսպորտով հացահատիկի, հացամթերքների, հատիկախարի (ֆուրաժի) և այլ կերատեսակների փոխադրման բնական կորուստների չափերը կազմում են՝

1) հացահատիկ, հացամթերքներ և հատիկախար (ֆուրաժ)՝ 0,15%.

2) համակցված կեր, ցորենի թեփ, քուսպեր բոլոր տեսակի՝ 0,18%.

5. Ջրային տրանսպորտով հացահատիկի, հացամթերքների, հատիկախարի (ֆուրաժի), այլ կերատեսակների (համակցված կերի, ցորենի թեփի, բոլոր տեսակի քուսպերի) փոխադրման բնական կորուստների չափերը կազմում են 0,25%՝ անկախ տարայավորման եղանակից:

III ՀԱՑԱՀԱՏԻԿԻ, ՀԱՑԱՄԹԵՐՔՆԵՐԻ, ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԿԵՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՌԱՋԱՑՈՂ ՓԱՍՏԱՑԻ ԿՈՐՍՏԻ (ԲՆԱԿԱՆ ԿՈՐՍՏԻ) ՉԱՓԵՐԸ (ՏՈԿՈՍՆԵՐՈՎ ՔԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ)

6. Հացահատիկի, հացամթերքների, խոտաբույսերի սերմերի և այլ կերատեսակների պահպանման ժամանակ առաջացող բնական կորուստների չափերը կազմում են՝

1) ցորեն, գարի, հաճար, տարեկան՝ էլևատորում՝ 0,055%, պահեստում՝ 0,06%.

2) վարսակ՝ էլևատորում՝ 0,065%, պահեստում՝ 0,07%.

3) եգիպտացորենի հատիկ՝ էլևատորում՝ 0,115%, պահեստում՝ 0,10%.

4) եգիպտացորենի կողրեր՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,30%.

5) բրնձի հատիկ՝ էլևատորում՝ 0,075%, պահեստում՝ 0,07%.

6) հնդկացորեն՝ էլևատորում՝ 0,075%, պահեստում՝ 0,07%.

7) կորեկ, չումիզա, սորգո՝ էլևատորում՝ 0,08%, պահեստում՝ 0,08%.

8) ոլոռ, ոսպ, լոբի, վիկա, սոյա (ունդ)՝ էլևատորում՝ 0,060%, պահեստում՝ 0,06%.

9) արևածաղկի սերմեր՝ էլևատորում՝ 0,175%, պահեստում՝ 0,15%.

10) այլ յուղատու մշակաբույսեր՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,11%.

11) կրուպա և բրինձ ջարդած՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,06%.

12) ալյուր՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,07%.

13) առվույտի, երեքնուկի, իշառվույտի սերմեր՝ էլևատորում՝ 0.0%, պահեստում՝ 0,17%.

14) տիմոֆեևկա՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,18%.

15) ժիտնյակ, անկոճղարմատ, սեզ (չաիր), օվսյանիցա լուգովայա, օվսյանիցա կարմիր, կորնգան և այլն՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,15%.

16) լյուպին՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,24%.

17) սուդանի խոտ, մոգար՝ էլևատորում՝ 0,0%, պահեստում՝ 0,2%.